ՈՎՔԵՐ ԵՎ ԵՐԲ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ) ԵՎ ՎՃԱՐԵՆ ՀԱՐԿԸ

Եկամտային հարկի ինքնուրույն հաշվարկման (վճարման) պարտավորություն կրող կամ եկամուտ հայտարարագրող ֆիզիկական անձը պարտավոր է հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնել եկամտային հարկի Հաշվարկներ (Հայտարարագիր), որի հիման վրա կատարվում է հարկի հաշվարկումը (վճարումը) կամ եկամտի հայտարարագրումը:

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ

Ֆիզիկական անձն (անչափահաս ֆիզիկական անձի դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) եկամտային հարկի Պարզեցված Հաշվարկը հարկային մարմին է ներկայացնում, եթե ՀՀ անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալը ազատված է եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից:

Ընդ որում, Պարզեցված Հաշվարկը ներկայացվում է բացառապես այն դեպքում, երբ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալը ֆիզիկական անձին վճարում է՝

→ աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ.

→ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց եկամուտներ:

Որևէ այլ դեպքում, ֆիզիկական անձը Պարզեցված Հաշվարկ չի ներկայացնում:

Եթե եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորությունից ազատված հարկային գործակալը ֆիզիկական անձին կվճարի վերը նշված եկամուտներից տարբերվող այլ եկամուտ, ապա այդ դեպքում՝ ֆիզիկական անձը պետք է ներկայացնի տարեկան Հաշվարկ (Հայտարարագիր):

Ֆիզիկական անձը Պարզեցված Հաշվարկը հարկային մարմին է ներկայացնում մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Հաշվարկի հիման վրա հաշվարկված եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ.

Հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

ՀԱՇՎԱՐԿ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ)

1. Հարկի հաշվարկման և վճարման նպատակով ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձն (անչափահաս ֆիզիկական անձի դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն) եկամտային հարկի Հաշվարկը (Հայտարարագիրը) հարկային մարմին է ներկայացնում, եթե՝

→ ՀՀ անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ եկամտային հարկի հաշվարկման (վճարման) պարտավորություններից ազատված հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձին վճարվել է այլ եկամուտներ, որոնք չեն ներառվում (չեն լրացվում) Պարզեցված Հաշվարկում.

→ Ֆիզիկական անձին եկամուտ վճարող հարկային գործակալը օրենսդրությանը համապատասխան ազատված է հարկի հաշվարկման (պահման), պետական բյուջե վճարման պարտավորությունից: Նշվածը վերաբերում է այն դեպքերին, երբ՝

- ֆիզիկական անձին վճարվող եկամուտը՝ մրցույթում ստացվող իրային մրցանակ է.

- Ֆիզիկական անձին վճարվում է կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից ստացվող եկամուտ

→ Ֆիզիկական անձը եկամուտը ստացել է հարկային գործակալ չհանդիսացող անձի կողմից:

Ֆիզիկական անձը Հաշվարկ (Հայտարարագիրը) հարկային մարմին է ներկայացնում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մայսի 1-ը ներառյալ: Հաշվարկի հիման վրա հաշվարկված եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը ներառյալ:

Հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

2. Եկամուտների հայտարարագրման նպատակով ՀՀ ռեզիդենտ հանդիսացող չափահաս ՀՀ քաղաքացին Հաշվարկ (Հայտարարագիրը) հարկային մարմին է ներկայացնում՝

2023 թվականի հաշվետու տարվա համար, եթե՝

→ 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ զբաղեցրել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոն.

→ 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսացել է 2022թ.-ի արդյունքներով 1.0 մլրդ. դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ).

→ 2023 թվականի ընթացքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով համարվել է իրավաբանական անձի իրական շահառու.

→ 2023թ.-ի ընթացքում ստացել է 20,0 մլն. դրամի չափով կամ ավելի փոխառություն:

2024 թվականի հաշվետու տարվա համար, եթե՝

- 2024թ.-ի ընթացքում համարվել է վարձու աշխատող.
- 2024թ.-ի ընթացքում ստացել է քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում հարկվող եկամուտ.
- 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ զբաղեցրել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոն.
- 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսացել է 2023թ.-ի արդյունքներով 1.0 մլրդ. դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ).
- 2024թ.-ի ընթացքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով համարվել է իրավաբանական անձի իրական շահառու.
- 2024 թվականի ընթացքում ստացել է 20,0 մլն.դրամի չափով կամ ավելի փոխառություն.
- 2023թ.-ի համար հանդիսացել է Հաշվարկ (Հայտարարագիր) ներկայացնող:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ 2023-2024թթ. համար 20,0 մլն. դրամի չափով կամ ավելի փոխառության ստացման դրույթը վերաբերում է բացառապես փոխառություններին և չի վերաբերում բանկերի (վարկային կազմակերպությունների) կողմից տրամադրվող վարկերին:

Փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

2025 թվականի հաշվետու տարվա և դրան հաջորդող տարիների համար՝ բոլոր ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները:

Ֆիզիկական անձը Հաշվարկ (Հայտարարագիրը) հարկային մարմին է ներկայացնում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը ներառյալ:

Հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին: